



Միսաք Մեծարեւնց

Կիրակնուրբ

«...Եկեալքս ի մտանել արեգականն
Տեսաք զլոյս երեկոյիս...»

Յուշիկ փախչող իրիկուան ծիրանի լոյսն է զըլարթ...
Ոսկի թելեր՝ պլլլւած խունկի թաւիշ մըշուշին.
Կապոյտ ծոպեր, ծիածան, ծըփուն ձայներ, միստի՛ք վարդ
Լոյսէ արցունք մոմերու՝ որոնք հանդարտ կը մաշին:

Խունկի ծարաւ իմ հոգիս կը ծըծէ պահն այս հանդարտ,
Ոսկեկըրակ աչքերով բուրվառներ երբ կը ճօճին.
Պակուցում մը հոգեգրաւ հոն կը թողու զիս անթարթ,
Կը զգամ համբոյրն իմ հոգիս պարուրող բիլ մարմաշին:

Մեղեսիկի երանգներ կ'օծեն պարոյրը խունկին.
Խորհուրդին եմ ծնրադիր բազուկներըս խաշանիշ՝
Ու կը սպասեմ որ ծագի հոգւոյս պայծառ կիրակին....:

Ջահերն հիմակ կ'երագե՛ն համակ գիւմրիւթ ու թարշիշ...
Կամարներէն, խորանէն կը ծագին լոյս ու ծիծաղ.
Հոգիս քիշ քիշ կը թաղուի անուրջին մէջ այս չքնաղ:

Յուշիկ փախչող իրիկուան ծիրանի լոյսն է զըլարթ....: